

# ՇԱՐՋՈՒՄ

Նախկին և նոր հրատարակչի  
համագործակցության հասցեին

Редакция на вѣстникъ

«Шаржумъ»

Варна

Redaction du journal

«Charijourn»

Varna (Bulgarie)

Գործարարական հասցե

Արևմտահայկանի ձեռագիր

( 20 ՍԱՆՔԻՄ )

Պուշկինի համար ձեռագիր

( 15 ՍԱՆՔԻՄ )

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՆԵՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԻՑԱՐԻՄ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ԹՐԵՐԸ

ԱՎՃԱՆՈՂ ԿՐՈՒԹԻՒՆ	
Պուշկինի համար	12 ֆր.
Տարեկան	6 »
Արևմտահայկանի համար	15 »
Տարեկան	8 »
Ամերիկայի համար	3 ֆր.
Տարեկան	1.50 »
ԿԱՆՔԻՄ ԿՐՈՒԹՅՈՒՆ	
Մանուկների տարիքի համար	40 սանթիմ
Կ. իսկ վերջին երեսի համար	20 սանթիմ
Երկրորդի համար	20 Օլլ. գեղջ կրչայ
Վառձայի համար	ձեռագիր 10 սանթիմ

Արդ էն «Շարժում»ի երրորդ «արեջր»անը լրացուցուցուցին արտասահմանի մաս մը բաժանորդներ իրենց բաժնեգրները շնորհակամբ, մանաւանդ ամերիկացի բաժանորդները: Ամբողջ տարի մը պատուով թերթը կը կարդանք, երբ գեռ կը խնայենք, արդէն կը կարծենք թէ պէտք եղածէն աւելի ազնուութեամբ վարուած կըլլանք մեր բաժանորդներուն հետ, և կը փափագինք որ, բաժանորդներն ալ շարաշար չի գործածեն զայն:

Խորհրդարան

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱՄԵԱԿԸ

Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք որ «Պրոչակ»ի վերջի համարը ամբողջովին ներկայում պէտք է լինի Դաշնակցութեան տասնամեակին բացի այդ, Դաշնակցութեան ամէն մի կամիտէ կարող է իր յարմար դատածի պէս ասնել այդ յոբելեանը:

Այս յոգեածի մէջ մենք միտք չունենք Դաշնակցութեան այդ երկարատեւ գործունէութեան մասին խօսելու. որովհետեւ այդ գործը արդէն Դաշնակցութեան օրգանին է վերաբերում. մեր գլխաւոր նկատումն է Դաշնակցականների, գլխաւորապէս Բուլղարիա գտնվող «անխառն» գաշնակցականների ուշադրութիւնը հրաւիրել այն կէտի վրա թէ՛ արդէն տաս տարին անցել է որ Դաշնակցութիւնը գործում է մեր յեղափոխութեան փշոտ ասպարէզի վրա, գործում է և պէտք է շարունակէ գոյժել անյողող ու անվհատ կերպով: Մեր նպատակն է նաև շնչտել թէ՛ Բուլղարիայում ապրող և գործող գաշնակցականների համար յարմար առիթ է ներկայանում լրջօրէն և ջորեղապէս ցոյց տալ թէ Դաշնակցութիւնը Բուլղարիայի

մէջ հաստատ գոյութիւն ունի, նրա ուժը և բարոյական ազդեցութիւնը անխաղտելի են, չը նայելով որ մի քանի վայրահաներ և թրքական միմաստեր ճիգեր թափեցին և շարունակում են թափել Դաշնակցութիւնը ու նրա գործիչներին վարկաբեկել:

Այտուտ տարրը գաշնակցականների լուրջութիւնը և համբերութիւնը իր բոլոր ստորութիւնների դէմ, թուրքական և կազմալուծմի նշան ընդունեց և հաստատ այն եղբայրացութեան թէ՛ անվախ կերպով կարող է իր խորտակման գործը շարունակել: Նրա անպատկառ յանդգնութեան շափը անցաւ... Եւ դեռ աւելի առաջ կանցնի, եթէ գաշնակցականները շարունակեն ստուերի մէջ մնալ:

Այս Բուլղարիայի գաշնակցականները պարտաւոր են իրենց ակնածելի գոյութիւնը ցոյց տալ, տասնամեակի հանդէսը ասնելով լուրջ, եռանդը, աւելնը և ազգային սուգը միասին խառնած:

Այդ հանդէսը սրբան համախմբում և սրբան ակնածելի լինի այնքան էլ լուրջ լինի: Այդ հանդէսով պէտք է մենք յարգենք մեր ընկած հերոսների յիշատակը, պէտք է բարոյական ուժ տանք մեր ժողովրդին, պէտք է զգուշացնենք յեղափոխութեան հակառակորդներին և մրտադրութիւն:

ՎԱՐԴՈ

### ԼԵԻՍՎՈՒ ԱՐՁԱՆԻ ԱՌՁԵԻ (ԲՕՐԻՄ ՍԱՐԱՅՈՎԻ ՃԱՌԸ) [1]

«Ահա, մի տարի յետոյ, մենք կրկին բուլղարական յեղափոխութեան Մեծ Բարոյիչ յեղա-»

[1] Այս ճառը Մ. Բ. Կոմիտէի եռանդուն և երիտասարդ նախագահը արտասանել է փետրվար 19ին Բուլղարիայի ազատութեան տարեգարծի առթիւ Սօֆիայի մէջ, հազարներից բաղկացած ունկնդիրների առջև:

Ի. Խ.

խաղանի արձանի առջեւ ենք դանդաղում:

Եկանք այստեղ, որովհետեւ այստեղից մեզ ոչ ոք կարող վանել: Եկանք մեծ Առաքեալի դիմացը յայտարարելու որ իր սրբազան պատուէրը — ամէն տեղ բուլղարները ազատ — իսկապէս գործոված է մեր սրտերի մէջ: Վերջապէս եկանք եռանդ և բարոյական ուժ ստանալու Մակեդոնիայի և Օտարինի ազատութեան դժոարին և յախտեանկան կոյրը յառաջ տանելու համար: Մակեդոնիա և Օտարին, այս երկու բառերը, արդէն հոմանիշ են դարձել դժոխք խօսքին: Այս երկու նահանգները իրենց ներկայ վիճակով, այսօր Բալթանեան թերակղզու դժոխքն են. որովհետեւ այնտեղ բնակող տարբեր ժողովուրդները, ճակատագրական մոլորումով միմեանց հակառակում են և անտարբեր կանգնած են թրքական եաթականների խաղերի առջև, ու վաղ թէ ուշ, նոր և աւելի անպատուարի ստրկութեան մէջ պէտք է ընկնամուն:

Երոպայի արտաքին մարմնացած է Մակեդոնիայի և Օտարինի ներկայ վիճակում. որովհետեւ կարելի է սպասել որ մի անհատ խաբէ միւսին, մի ժողովուրդը խաբէ իր դրացիներին, բայց լսված չէ, և զվուելի է երբ ամբողջ աշխարհը խաբում է գերի ժողովուրդներին: Եւ այդ, եղբայրներ, մեզ հետ պատահեց. մեզ իրաւունքներ տրուեցին, բայց նախ քան մեր նրանցից օգտվելը, եա խլեցին: Երբէք քաղաքացիների կանգբը Բերլինի գաշնակցութեան նման հրէշաւոր և պակասաւոր ծնունդ չէին վիժել: Եւրոպան 23 տարի է որ իր այդ հաշմ ծնունդը կեղտակրում է և ուզում է ոտքի կանգնեցնել մեր մակեդոնացի և Օտարինի եղբայրներին ուսերի վրա...:

Այսօր մենք պարտաւոր ենք բարձրաձայն բողոքելու այդ արատաբեր և տմարպի գործողութեան դէմ: Եւ այդպէս պէտք է անենք մինչեւ որ արժանի և պատրաստ

աի կը լինենք աւելի ազգու կերպով բողոքել, զէնքը ձեռք բերու, որովհետեւ միայն այդ բողոքի մէջն է մեր փրկութիւնը:

Յետոյ ճառախօսը շնչտելով թէ շնորհիւ մի քանի մեծ պատուութեանց ներկայացուցիչների քաջալերութեան՝ թուրքերը ընդհանուր հալածանք են սկսել Մակեդոնիայի և Օտարինի բուլղարների դէմ: ու համառօտ կերպով նկարագրելով նրանց վիճակը՝ շարունակում է:

«Ի՞նչ ենք անում մենք ներկայ ծանր պարագաներում մեր հայրենիքի մէջ: Մեր պարտականութիւնները կատարել ենք արդեօք: Ճիշդ է, կարելի է ասել որ մեզնից մի քանիսը, այսպէս ասած, իրենց պարտականութիւնը կատարել են. բայց կան և շատերը, որոնք ոչինչ չեն անում և սպասում են: Առաջինները սրժանի են այստեղ գալուն, երկրորդ տեսակիները իրենց ներկայութեամբ անպատուում են յեղափոխութեան Առաքեալի յիշատակը»:

Այս խօսքերից յետոյ ճառախօսը գառնալով Լեւակու արձանին՝ հարցնում է:

«Մեծ Առաքեալ, դու սպասում էի՞ր, ուշադրութիւն դարձնում էի՞ր Եւրոպական յոթանների, քաղաքացիների վրա: Ոչ երբէք, դու միշտ առաջ էիք դնում, առաջ»:

«Դէ՛հ եղբայրներ լրացնենք յեղափոխութեան Առաքեալի գործունէութիւնը — ամէն տեղ ազատ բուլղար — մեզ միայն մնում է նրա զօած ճամբով երթալ, իսկ այդ ճամբան ամեն մարդ գիտէ»:

Բեֆօրեի

### ԼԵՇՈՅԻ ԿԻՆԵՐԸ

Վարչավիա քաղաքի մէջ քանի մը նշանաւոր լեհուհիներ որոշած են կանանց ընկերութիւն մը հիմնել, որուն նպատակը պիտի ըլլայ ազգայնական ոգին պարգայնել լեհ ժողովրդի մէջ: Նախաձեռնարկ եղող տիկին-

ները հրաւիր կարգացեր են նաեւ Աւստրիոյ և Գերմանիայի լեհուհիներուն :

Յայտնի է որ լեհացիները բաւական լուսաւորուած ժողովուրդ են . ամէն տեղ ալ անոնք ահագին ճիգեր կը թափեն իրենց ազգայնութիւնը ոչ միայն պահպանելու , ոչ միայն կորսուելու , լուծուելու վտանգէն զերծ պահելու համար , այլ և զայն ազատելու օտարներու գերիշխանութենէն : Լեհերը իրենց ազատասիրութեան մէջ՝ էն յամառ ժողովուրդներէն մին են . բայց մինչեւ այսօր լեհուհին սրտշակի և հաւաքական կերպով մասնակցած չէր լեհ ժողովուրդի ազատագրութեան և ինքնապաշտպանութեան գործին :

Եթէ չեմ սխալիր , այս առաջին անգամն է որ լեհուհին այդպէս որոշ կերպով ապարէզ կուգայ իւր ժողովուրդին և իր հայրենիքին ծառայելու համար : Ապարէզ կուգայ սքանչելի նպատակով ընկերութիւն մը հիմնելով :

Եւ իսկապէս կնոջմէ աւելի լաւ ո՞վ կրնայ ազգայնական ոգին բորբոքել ժողովուրդի մը մէջ , Ձեռք կիրէր մայր է , քոյր է և ամուսինն է : Երկրի մը ապագայ քաղաքացին՝ մանուկը կնոջ անմիջական հսկողութեան տակ կը մեծնայ , երիտասարդ մը զինքը երջանիկ զգալու համար , կնոջ մը սիրտը գրաւելու ամէն ճիգ կը թափէ . և ամէն զոհողութեան պատրաստ է : Երկու տարր , որոնք միշտ հայրենիքին պէտք են . մին հայրենիքի ապական կը ժարմնացնէ իր մէջ , միւրը ներկան : Եւ կինը միշտ կրնայ , կարող ու ընդունակ է այդ երկու տարրերուն մէջ ազգայնական

զգացումներուն հուրը բորբոքել : Շատ ուրախ ենք որ մեզի բազմակից լեհ ժողովուրդի ազնիկ պաւակները այդպիսի գեղեցիկ միտք մը յղացեր են . ուրախ ենք և կը հաւատանք թէ՛ լեհուհիներն ալ իրենց սկսած գործը նոյն եռանդով և նոյն յամուրթեամբ առաջ պիտի տանին , ինչ եռանդով և տոկունութեամբ մինչեւ օրս գործած են լեհ ազատականները :

Երբ տեղ մը կը կարգամ և կամ կը լսեմ թէ ու է ժողովուրդի մը մէջ կրնան ալ սկսած են ազգային վերածնութեան գործով լրջօրէն զբաղիլ , նախանձս կը շարժի . կուզեմ հայուհին ալ նոյն վիճակի մէջ տեսնալ : Ճիշդ է , հայուհիներ ալ կան , որոնք հայոք բերու , հայ ազգատներու մասին կը մտածեն . նոյնիսկ հայ յեղափոխութեան այժմանակցողներ եղած են . բայց ինձ կը թուի թէ այդ բոլորը ի ցոյցս , ի տես մայրկանց կըլլայ . իհարկէ բացառութիւնները յարդի են : Մեր կիներու մեծ մասը ազգին համար կը գործէ մեքենաբար , ազդուելով , ոչ ինքնաբերաբար : Թերեւս ասոր պատճառը ան է որ հայ այր մարդիկ ալ ոչ սկսած են լրջօրէն ազգին և հայրենիքին վիճակովը զբաղիլ . ու , մինչեւ օրս ալ անհրաժեշտ լրջութիւնը չունին հանրագումարման մէջ :

Այսպէս թէ այնպէս շատ բազմալի է որ հայուհին ալ շուտով հասնի այն կէտին որ ինքնաբերաբար նախաձեռնող մը հանդիսանայ մեր հասարակական գործունէութեան մէջ :

—)(—

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՐԻՆԱ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ ՄԸ  
1876ի Պուշկար Ապրիլեան  
Յեղափոխութեան

Կուզան . . . այս շփոթեցուցիչ ու յուզիչ աղաղակը բաւական եղաւ թրնովայի ամբողջ ժողովուրդը իրար խառնելու : Եւ արեւելոց իրարանցում մը քաղաքի ամենամութ ու անթափանցելի խաւերը զրգռեցուց , նա ամէն տեղ արձագանք տուաւ . քաղաքի մէկ ծայրէն միւս ծայրը թռչելով :  
— Կուզան . . .  
Սոսկում մը պատած էր ամէնքին ալ . ոչ ոք կը համարձակէր զայն բարձրաձայն արտասանել , մէկն ալ չէր ուզեր ըմբռնել ասոր իմաստը , եւ չէր կրնար հասկնալ . փափաք ունէր տեսնուելու , տեսաւ . կամ տեսնուելու վարանողը—տեսաւ իր ցնորքը , կուզան . . . բառը անլուծանելի ,

խորհրդաւոր հանելուկի պէս կը շարունակէր թեւատարած թռչիլ , եւ ամբողջ անգիտակ թէ իրեն ի՞նչ կուպասէ—երկիւղ թէ ուրախութիւն , փոթորիկ . թէ վայելք իր բոլոր զօրութիւնը արգէն գործ դրած էր զայն աւելի հսկայ եւ զրդիչ ընելու :

Գերի ժողովուրդը հմայիչ ձայնի զմայլանքներովը կապրի . . . իրեն այնպէս կերեւայ թէ գերութեան շղթայները վայրկեանի մը մէջ հրաշքով կը փշրուին , ինչպէս կախարդական զիւզիչ երազներու մէջ կը պատահի : Նա կուզէր հաւատալ թէ երազ չը տեսնար եւ չէր ուզեր իր քնաթիթաթիւ կողմերը սրբել (քերել) որպէս զի աւելի երկար միջոց մը այդ յափշտակիչ վիճակին մէջ մնայ :

Ինչպէս որ ի ծնէ կոյրը լոյսի մասին գաղափար չունի , այնպէս ալ գերի ժողովուրդը ազատութեան լոյսին վրայ ընաւ գաղափար չի կրնար ունենալ :

Բայց Կուզան բառը , տարերային ուրուականի կատաղի այրքներով կը յառաջանար , նա արտաբայ կարգի վիթխարի ուժով կը ճեղքէր ու իրեն ճամբայ կը բանար . . .

ՆԱՄԱԿՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՃԿԱԶԱՅ

Ռուսները Կուբանի շրջանի մէջ նոր սկսեր են ծխախոտ մշակել , բայց շատ վատ տեսակի ապրանք կը հասցունեն , որու փութը հազիւ 3—4 րուպլի կը ծախուի : Իհարկէ եթէ մի օր բլանթաթօրները արտաքսուին եւ կառավարութիւնը փորձնական կայարաններով օգնութեան հասնի մոտիկներուն , զժուար չպիտի ըլլայ ունենալու երկրագործութեան այդ կարեւոր ճիւղին տիրանալը :

Սօխումի , Ատէրի , Սօչիի եւն . երկրագործները խիստ բնակած են . ընդարձակ հողեր եւ բանւորներ չի գտնարուին , ստիպուած են փոքր տարածութեան վրայ ծխախոտ հասցունել (կէս տէսեղինէն առ առաւելն 3 տէսեղին) եւ ամբողջ րոտանիքով մասնակցիլ մշակութեան : Իսկ ծխախոտը ամենասուկալի աշխատանք կը պահանջէ . փետրուարին հողը կը հերկեն , մարտին սերմը կը ցանեն , ապրիլէն—մայիս տունկերը հատ հատ հողին մէջ կը հաստատեն . (ասորի) մինչեւ որ ծխախոտի տերեւները հասնին հողինին կեղնէ . արտին մէջ բուսած խոտերը պէտք է շարունակ արմատախիլ ընեն , իսկ եթէ անձրեւ չեկաւ , տակառներով ջուր կրին արար եւ ջրեն . խեղճ կիներն ու աղջիկները ջրի տակառներու տակ կը փախն , առողջապահական ոչ մի նկատում ունին : Տերեւները որ հասան , պէտք է իրենց ժամանակին քաղուին , եթէ ոչ բերքը կը փշանայ , բացի այդ քաղուելէ առաջ եթէ երաշտ կամ օրերով անձրեւներ եղան կամ վերջի պահուն կարկուտ մը եկաւ , այն տարուան աշխատանքը կորսուելով զիւզցին կը սնանկանայ : Քաղուած տերեւները թելերու վրայ կը շարեն խոշոր ասեղներով . թելերը կը հաստատեն փայտէ ձողերու եւ արեւուն կը դնեն որ չորնայ եւ ծխախոտի սովորական գոյնը ստանայ . եթէ անձրեւ զարնէ , տե-

րեւները կը փշանան . ուստի գիւղացիներու աչքը երկնակամարին յառած կը մնայ . մի մութ ամպի երեւում բաւական է զիրենք վախցնելու եւ ահա մեծ ու պղտիկ կսկսին ձողերը «թիւթիւն տամին» (ծխախոտի յատկացուած բաց շէնք) կրել . ամպը անցաւ նորէն դուրս եւ այսպէս երբեմն օրը մի քանի անգամ : Այս տեսները եթէ 15—20 օր իրար ետեւէ անձրեւ եկաւ , ծխախոտը դարձեալ կը կորսուի , վասն զի ծածկի տակ պահելով խոնաւութիւնն կը փոքրի . (Կուբանի շրջանի մէջ 1—2 խոշոր բլանթաթօրներ ջերմանոցներ ունին տերեւները այդ պարագային չորցնելու , բայց ծխախոտը այնքան յաւ չի լինիր) : Աւպտեմբերի վերջերը չորացնելը կը վերջանայ եւ կսկսի տեսակներու զատումը . թելերէն կը քայեն տերեւները եւ կընտրեն առաջին , երկրորդ երրորդ , եւն . տեսակներ եւ իւրաքանչիւր տեսակէն կապեր (տէմէթ) կը պատրաստեն . այս եւ . ծանր եւ ձանձրաձախ աշխատանք է եւ վնասակար է մասնաւորապէս աչքերուն : Տեղիքը կը վերջանայ գարնան , որ ժամանակ հակիր (տէնկ) կազմելով կսպասեն վաճառականին դալուն որ ապրանքը յանձնեն (թէսլիմ) ընելու : Վաճառականները ընդհանրապէս կուզան մարտին մինչեւ յունիս , որ բնիմ ծխախոտը ցանկէն մինչեւ ծախելը 14 ամիս հարկաւոր է . ալը 14 ամսուան մէջ հայ գիւղացիի ֆիզիքականը մեծ վնաս կը կրէ . գիշեր ցորեկ , կիրակի օրերը անգամ հանգիստ չունին , անընդհատ կաշխատին ու կսպառին . չափազանց աշխատանքին աւելցուցէք վատ սնունդը , ցուրտ ու միաշից բնակարանները , անյարմար կլիման եւ զարմառալի չի թուիր ջերմախտի տարած գոհերու , յոգացաւով տառապողներու եւ անդամաւոր զիններու անադին թիւը :

Ծխախոտի համար այդպիսի չարաչար աշխատանք թափելէ յետոյ , պէտք էր որ բոլորն ալ զբամաւոր լինէին , մանաւանդ որ իրենք սակաւապետ եւ խնայող մարդիկ են . սակայն վաշխատուներէ ազատածներն քաղաքի խանութպանները կը խլեն . խանութպաններու կիսատ թողածը

Հաւաքուեցաւ խառնիճաղանձ խուժան մը , ահագին զանգուած մը . եւ թրնովայի վերի կողմի լայն հրապարակը ծածկեց :

Դա բայց ժողովուրդն էր որ շարժուեցաւ եւ անհամբեր աչքով սկսաւ նայիլ զէպի վար , կառավարութեան դուռը—քօնաքը , դիտելու թէ արդեօք ինչ պիտի պատահի իրեն :

Հոն բոլորովին ուրիշ տպաւորութիւն ըրաւ—կուզան . քօնաքը վայրկեանին ամոլացաւ . վալին պաղքատիքի մէջ թաթախուած , քաղաքէն կծիկը դրաւ եւ անբեւութացաւ , իսկ խեղճուկ զապլիները փոթորիկէ մը փախած ոչխարներու պէս սլքուեցան եւ ծակ ու ծուկ մտան :

Ահ ու սարսափը տրեքը . բռնաւորը սոսկումէն սահմուկած էր . քաղաքի վարի մասը բոլորովին գատարկուեցաւ :

Քամին քաղաքի պուլկարանակ թաղերէն—կեցցէ՛ յեղափոխութիւն , կեցցէ՛ ազատութիւն—օդին մէջ սաւառնող որոտընդոտ աղաղակները կառնէր կը տանէր պալքանի խուձորերը . . .

Իրինա—վարժապետ Գիբօի աղ-

ջիկը , ճիշդ աս փոթորկալից ու խառնաշփոթ պահուն , լուսամուտէն կը դիտէր ան լայն հրապարակը որ գէպի Մարինո—Բօլէ դաշտը կը ձգուէր . նա ատ ահագին ու հոծ բազումութեան գուժարեւիքը տեսաւ , եւ խանդով ձեռքերը կուրծքին սեղմելով գոչեց—դրօշակի ձաճանուելու յամանակն է հիմակ . նա անձկութեամբ կսպասէր ապստամբութեան նշանի մը՝ որ իր կուրծքին վրայ կրած ոսկի առիւծը ծածանեցնէր , զոր սղատութեան առաքեալներու յորդորովը , շատ անքուն գիշերներ տնցունելով , ասեղնագործած էր :

Իր ոգևորութեան ու սքանչացումի տեսնը իրինան սենեկին մէջ ետեւը նայեցաւ . բայց իր աչքերը ոչ մի կենդանի նայուածքի հանդիպեցան . սնեցիք որ բազմանդամ ընտանիք մըն էին , ձղած փախած էին : Ինքը խորատուգուած իր խանդավառ մտքերու մէջ , անոնց աղմկալի փախուստը չէր կրցած լսել :

Ուժճապը այնքան անակնկալ ու սարսափեցուցիչ էր որ , ծնողքը մոռցիր էին սենեկի մէջտեղ կախուած օրօրացը , որուն մէջ երկու տարեկան

ծխախոտի վաճառականները կը լրացուեն: Սօխումի շրջանը մանաւանդ սաստիկ ենթակայ է այդ ցաւալի վիճակին: Յայտնի է որ գաղթականները հայրենիքէն դուրս ելած ժամանակ առանց պարտքի չեն եւ շատ անգամ կը ստիպուին կրկնակի արժէքով մտերակներ տալ: Սօխում որ հասան, ճար ճուր կընեն հող կը վարձեն, բայց մինչեւ բերքի հասնիլը ապրիլ պէտք է. կը դիմեն հայրենակից խանութպաններու, որոնք նազ նուզ ընելով կը համաձայնին ապառիկ տալ. բայց Աստուած իմ ինչ ապառիկ, 10 կոպէկի արժամք 20 կոպէկի կը հաշուեն. գիւղացին գրագէտ չէ. կամայ ակամայ պիտի հաւատայ եւ քիչ ժամանակի մէջ մի խոշոր պարտք ալ կուենայ: Բերքը որ հասաւ, այսինքն երբ սերեւները չորցան, վաճառականներու գործակատարները կը շրջին գիւղերը ապրանքները աչքէ անցունելու. գինը կը կտրեն պայմանաթու զիտով. բայց այնպիսի խմբագրութեամբ որ ամեն օրինական ուժ իրենց վերապահած են եւ կը վճարեն մաս մը դրամ կանխավճար (զատակա). այսուհետ զատակայի սեզօնն է. վաճառականները (պիտաւորապէս գործարանի ներկայացուցիչներ) իրենց գործակատարները կընտրեն հայ խանութպաններէն կամ գիւղի մէջի ազգացիկներէն. տարեկան 300էն մինչեւ 2000 բուպի վարձով: Վաճառականները հետեւած են հինաւոր իմաստութեան «բերքը ներսէն կանուխ». եւ չեն սխալած: Այդպիսի անխիղճ գործակատարներու աշակցութեամբ, լաւ գինով կը սակարկեն գիւղի գործընտրու ապրանքները, իսկ միացեալներուն ուշադրութիւն չի դարձնելով կասկածն աժան գնով պայմանաւորուիլ. բայց ամենամեծ զրկանքը կը լինի թէսլիմին:

(Շարունակելի)

ՊԱՂ ՃԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՐ

Արեւելքի փետր. 2 թիւ 4500/ի ազգային լուրերու բաժնին մէջ Սօֆիայէն զրկուած թղթակցութիւն մը կայ տեղւոյս ազգային գործերու մասին, որմէ կը քաղենք այն ինչ որ կը վերաբերի Այցելու հովիւին:

«Մենք պուլկարահայերս, այցելու հովիւ Պաղճեանի վրայ ալ ունէ հաւատք չունինք. ան ալ եւս աւելորդ բեռ մըն է մեր սերունդ վրայ, անիկայ ուսման քիւնէ յառաջ իմութեան լիշնամի, անոր գանգաղութեան և անկարողութեանը պատճառաւ մեր գաղտնիքը ընդհանուր լուրջ հակուցութեան մը վուրկ մնայած են, անիկայ հետաքրքրուած չէ ոչ եկեղեցական և ոչ ալ քահանայական խնդիրներով, և ոչ ալ ուրիշ իրեն ստորագտեալ պաշտօնեաներու վիճակովը. ան պուլկարահայերը կամաց կամաց դէպի թեմական գործերու անտարբերութեան և այսպէսով օտարանալու պիտի մղէ, թէ իր ապիկար պաշտօնավարութիւնը դեռ երկարի: Սօֆիայի հայ ժողովուրդը եկեղեցիէն պաղծեալ, եկեղեցին պղծուած նկատելով, ալ պատրիարքարանի պարտքն է հոս քահանայ մը զրկել որ եկեղեցւոյ մէջ խաչահանգիստ մը կատարելով մոլորդիւն սիրցնել տայ իր եկեղեցին և նոր ընտրութիւն մըն ալ կատարելով՝ Պաղճեանի շահատակութեանց վերջ մը գնէ»:

Ահա ձեզ մշտական և միազոյն գանդատը հայ վարդապետ առաջնորդի կամ հովիւի դէմ: Իսկապէս Պաղճեան վարդապետը իր ներկայութեամբ ի՞նչ օգուտ բերաւ պուլկարահայ գաղթական-

ներթեան. և ոչ մի. իսկ քիսա, այն որ ազգային գործերը նոյն տարտամ, նոյն խառն վիճակի մէջ մնացին, ինչ որ էին հաշակաւոր Արսէն վարդապետի ժամանակ. Այդ ձերու կը ի՞նչ կարող էր ընել Պուլկարիոյ նման անկերպարան և խառնակ գործերով թեմի մը մէջ:

Թեքու Օրմանեան Պաղճեանը հոս գրկած միջոցին, մտածեր է թէ սա իր ձերութեամբը պիտի կրնայ ազդեցութիւն գործել և պուլկարահայ զարթոթին գործերը ինքնաբերաբար պիտի կարգադրուին: Մեծ սխալ. մարմնով աչնածելի կլեբականներու ժամանակը անցած է:

Պաղճեան վարդապետը ինքն ալ պիտի հասկնար որ Պուլկարիան իր տեղը չէ, և օր առաջ Պոլսոյ ճամբան բռնելու էր: Կը յուսնք որ Պատրիարքը շուտով Պաղճեան վարդապետը ետ կը կանչէ և անոր փոխարէն բանիւ բուն, երանդուն և գործունեայ այցելու հովիւ մը կը զրկէ մեզ:

ՆՈՒՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Վառնայի երկսեռ Որբախնամ Ընկերութեան Գործադիր Ժողովս կուգայ հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու Իսլամիոյ ազնիւ ազգայնոց եւ նա մանաւանդ նորընծայ քահանայ Արթ. Տ. Վալիւնակ Տ. Մինասեանի որ բարեհաճած է անտէր որբերու անուսով 80 ութսուն ֆրանքի գումար մը հաւաքել ու մեզ զրկել:

Ինչպէս կերելի Արթ. Տ. Հայրը իր նոր ընտրած սպարկիւն մէջ օգտակար դառնալու մտքը ամենաանախանահան պարտք նկատած է որբերու նուիրական գործով զբաղել:

Մեզ փափաքելի է յուսալ որ Պուլ-

կարիոյ գանազան կողմերու հովիւներ եւս ինկատի ունենալով վերոյիշեալ կղերականին օրինակելի բնութայքը պիտի փութան կատարել իրենց պարտականութիւնները հանդէպ անտէրուսն զորբին:

Մնա՞ք յարգանք

Ի գիմաց Գործադիր Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ  
Յ. Կ. Ճանկիւղլան Տօֆ. Շաֆարեան  
Վառնա, 20 Փետրուար

ՅԱՆԿ ՆՈՒՆԱՐԱՆՈՒՆ

Սրարս Զախորս քաղաքին

Տեսակ	Լ. Ս.
Սարգիս Կարապետեան	10.—
Յովակիմ Սերրբեան	2.—
Որբախնամ Ոհն	5.—
Յովհաննէս Յակոբեան	4.—
Միքայէլ Մկրտիչեան	2.—
Սիմօն Մէճէրեան	5.—
Յակոբ Շրլահանեան	2.—
Կարապետ Թւրքեան	3.—
Կարապետ Յէլմէյկեան	2.—
Յարութիւն Մէքիմպեան	1.—
Սիրական Շահրիկեան	1.—
Առաքել Տ. Մինասեան	1.—
Աբրահամ Գարայեան	1.—
Մհ. Ղազար Սաչատուրեան	1.—
Պարոն Սաչատուրեան	4.—
Հայրապետ Սիմօնեան	—50
Նօվա Զախորս քաղաքին Եսայի Սաչատուրեան	2.—
Յակոբ Սուրիմպեան	2.—
Համբարձում Կիրակոսեան	—50
Իսլամիա քաղաքին Սաչիկ Թօնաֆեան	5.—
Տեսակ Յովհաննէս Կարապետեան եւ Ալիքսան Գլխորանի հարստեանց հանդէսի առթիւ պնակէ գոյացեալ	12.—
Վարդանանց հանդէսի առթիւ պնակէ գոյացեալ	14.—
Ութսուն լէֆ սլժաթ	80.—

(Կնիվ)

—)(—

մանկիկ մը մշիկ մշիկ կը քնանար. Իրինան, օրօրօցի քովը երթալով, համարուրեց երկխայի կարմրիկ այտերը եւ փոխանակ գրօշակի՝ զայն գրկեց, ու փոզոցի դէնէն դուրս թռաւ զայն դրացիներէն մէկուն յանձնելու:

—Արդեօք ի՞նչ պիտի պատահէր այս հրեշտակին թէ՛ զինքը նկատած չըլլայի, կը խորհէր Իրինան:

Իսկոյն իր այրին պատկերացան հրեհի արհաւիրքները, բոցավառ, ամէն բան լափող, քանդող կրակը. որովհետեւ, նախօրք պատրաստութեան ծրագրին մէջ էր թրնովա քաղաքը հրդեհել. այս միտքը աւելի սոսկացուց զինքը, երբ երեւակայեց թէ սա հրեշտակի նման քանի՞ անմեղ զոհեր պիտի լափէր կրակը:

Փողոցները ամալացած էին, գերեզմանական լուծիւն մը կը տիրէր. ալ սմբոխի բարձրագոյ աղաղակները չէին լսուէր:

Իրինան զբան առջեւը իրեն դիմացի դրացուհին տեսաւ, որ ձեռքը ծաղկեփունջ մը բռնած կը կենար. կինը իր մէկ հասիկ զակին հրոսա-

խուճըրը դիմաւորելու էլած էր, եւ այդ ծաղկեփունջով անոր հրացանը պիտի զարգարէր:

Ճիշդ շարաթ մը առաջ մայրը ծաղկեփունջով ճանարհ գրած էր իր գաւակը, եւ կուգան—աղաղակները, հէգ մայրը իր գաւակին հրոսախուճի գալը կը հասկնար, ու ասոր համար ալ կը սպասէր:

Երկու հայրենասիրուհիները զուարթ ու երջանիկ խնդումով զիրար դիմաւորեցին եւ իսկոյն նայուածքներու փոխանակութիւնով մը զիրար հասկցան. նոյն միջոցին հետեւէն պատանի մը գլուխը ծռած, ծանրախոհ ու տխուր մտեցաւ:

Տիկինը ու օրիորդը հետաքրքրութեամբ զայն ի՞նչ կայ—հարցումով դիմաւորեցին:

—Ոչի՞նչ. ձերբակալուած են. վհատութեամբ պատասխանեց պատանին եւ անցաւ:

Երկու դրացուհիները շանթահարուելով տուն քաշուցան:

Իրինան նորէն լուսամուտի առաջ կենալով՝ հրապարակի վրայ յուսահատ նայուածք մը նետեց, եւ ապշած դիտեց որ սա անագին ամբոխը

երկու վայրկեանի մէջ ցրուած էր... կարծես թէ քիչ մը առաջ հոն հաւաքուած սոււար բազմութիւնը սոսկայի ուրուականէ ահաբեկած հրապարակէն իր հետքը կորուսած էր... Ամբոխի վայրկեանական խանդավառութիւնը եւ շուտով ընդհանուր լքումը վշտացուց զինքը:

Հայրենասէր ու զգայուն սիրտ մը աննշող այս անորակելի կացութիւնը իրինայի աչքին պատկերացաւ եւ խորապէս ազդեց անոր փափուկ սրտին: Վարէն 30ի չափ զապթիէներ երեւցան. հոն դեղերով մի քանի հոգի ասոնց երեւումէն իսկոյն անհետացան. զապթիէները իրենց խոպտ ձայնովը խանութպաններուն կտտիպէին իրենց խանութները բանալու, սակայն խանութները, ինչպէս որ գոցուած էին, այնչափ դիւրութեամբ չէին բացուեր:

Մի քանի հլու բայաներ գլուխնին խոնարհելով բացին խանութները, ոմանք կարգապահութեան սոսկալի ներկայացուցիչներէն իրենց պաւազրական դիտաւորութիւնը սքողելու համար, զէնք, զաչոյն կամ կացին թողկարար տանիքներու տակ կը խոթէին:

Լքուճը ու սոսկուճը յաջորդած էին. սա պատրանք մըն էր այն երկար ու լարուած հազեկան գրուութեան:

Թուրքերը վաղուց եւ աւելի սոսկուճով իր անորոշութեամբ սարսափելի դէպքերու կը սպասէին:

Պուլկարներն ալ գիտէին ապստամբութեան պատրաստութիւնը, սակայն լաւ մը չէին գիտեր թէ ո՞ւր պիտի յանգի եւ ի՞նչ հետեւանք պիտի ունենայ, մեծ յոյս մը ունէին թէ զիրենք ազատելու պիտի գան: Բայց ո՞վ պիտի գար: Օտարները թէ իրենցները, Ոչ ոքին յայտնի էր:

Հին աւանդութիւնը իրենց ենթադրութիւններուն հաւատք կուտար թէ անպատճառ մոսկովցիին գալու է, որովհետեւ ուրիշը չը կրնար յաղթել թուրքին. թուրքը զօրաւոր է. սակայն մոսկովցին ալ աւելի զօրաւոր է:

Թարգմ. Պ. Ս.

(Շարունակելի)

Ն Ա Մ Ա Վ Ա Տ Ո Ւ Փ

Արտասահմանի այն բաժանորդները որոնք կուզեն «Ճարտար» շաբաթը երկու անգամ դադարեցնելու պէտք է երեք ֆրանք բաժնեկրիներն առելի վճարեն. այսինքն 18 ֆրանք է:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՀԵՏԵՒԵԱԿ ԵՐՁԱՅԵՐԱԿԱՆ ԴՐՎԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ:

ԸՆԿԵՐՆԵՐ,

Կարգադիր յանձնաժողովը մարտի 8 Նիստում հաշվեց համագումարի տեղի համար ուսանողական մարմինների կողմից ստացւած ձայները և շտապում է յայտնել ձեզ, որ ձայների մեծամասնութիւնը ստացել է Միւնխէն քաղաքը:

Ուրեմն առաջիկայ համագումարը տեղի կունենայ Միւնխէնում և կը բացուի ապրիլի 1ին և կը տեւէ մի շաբաթ:

Հաղորդելով ձեզ այս մասին խնդրում ենք շտապել կատարել պատգամաւորներ ընտրութիւնը (յօդ. 10 ծանօթ) Համագումարին մասնակցելու համար:

Ընկերակա՛ն բարեկեցիկ Կարգադիր Յանձնաժողով

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Արեւելք» մէջ Մշոյ վիճակի մասին եղած թղթակցութենէ մը հետեւեալը կը քաղենք. 1900ի հունձքը բաւական առատ եղած է և հացը աժան. չը նայելով այդ յաջող պարագային ամուսնութիւնները առելի քիչ եղած են, քան նախորդ տարին:

Ամուսնացողները մեծ մասամբ չքաւորներ են:

Բայց ամուսնութենէն մէկէ առելի կնիկ պահելը և այլն թէ Պուլանդի և թէ գաշտի մէջ սարածուած է: Անցեալ տարի առաջնորդարանը շարունակ զբաղուած է եղեր իրենց ամուսիններէ լքուած կիներու խնդրագրերը քննելով: Այդ կիներէն քիչերը միայն ամուսնալուծութիւն խնդրեր են. մեծամասնութիւնը օգնութիւն է ուզեր. պանդուխտներէն պարտաճանաչները անտարբեր չեն մնացեր և օգնութեան հասեր են իրենց ընտանիքներուն, իսկ շատերն ալ անտարբեր մնացեր են, կարծես մայր, քոյր, կին և զաւակ մոռցած ըլլան:

Հիմա պանդխտութեան գացողները թիւը առաջուան պէս շատ չէ, բայց վերագարձողներն ալ քիչ են եղեր:

Փետրվար 23ին Պուսոյ ուսումնական ժողովը նիստ մը պիտի ունենար ուսուցիչներու հանգստեան սնուկ մը հաստատելու միջոցներուն վրայ խորհրդակցելու համար:

Վենետիկի Միթթարեաններէն հայր Զարբանալեան, նշանաւոր գրագէտը, վախճաններ է: Չը նայած որ հայր Զարբանալեան վեց տարի է ի վերակար էր և նոսաճ կեանք կանցնէր, բայց նորէն էր մտաւոր կարողութիւնը կորուսած չէր:

Մենք արդէն հաղորդած էինք Մուշի հայ դպրոցներուն նախկին տեսուչ Սարբեանի մահը: Սարբեան հինգ որր է թուղուցած, որոնք ապրելու միջոցներէ զուրկ են. Պուսոյ «Սուրհանդակ» թերթը հանգանակութիւն բացեր է հայ ուսուցիչ գործիչին որբ ընտանիքին համար:

Շամախի առաջնորդ Եսայի եպիսկոպոս վախճաններ է, 5000 բուսի կտակեր է ներսէսեան դպրոցին, 2000 բուսի էլ միւս անի ճեմարանին:

Ռուսահպատակ կեսարացի Կ. Խուպէսբեան մեռնելով 3100 ոսկի թողուցեր է ազգային զանազան հաստատութեանց:

Եգիպտական կառավարութիւնը նուպար փաշայի համար Ալէքսանտրիոյ մէջ արձան կանգնելու որոշումը տուեր է:

Պուսոյ Պէրպէրեան մասնաւոր վարժարանի 25 ամեակը լրանալով նոյն դպրոցի նախկին աշակերտները որոշեր են հանդիսաւոր յորհեան մը կատարել:

Փետրվար 13ին Թիֆլիսի դատական պալատի մէջ նշանակուած է եղեր Արթ. Հմայեակ վարդապետ Արշարունիի, և Սամուէլ Սողոմոնեան ու Գրիգոր Գալուստեան քահանաներու դատը, որոնք կը մեղադրուին Սուրմալի գաւառին մէջ մի քանի հայ զիւղացիներու ուսուցանութենէ նորէն Հայ Լուսաւորչական դարձնելու մէջ: Երեւանի նահանգական դատարանը մեղադրեալները արդարացուցեր էր. բայց դատախազի ըզզրքով Թիֆլիսի բարձրագոյն դատարանը անցեր է: Դատը յետաձգուեր է, որովհետեւ բոլոր դատաւորները ուսուցաւան չէին, ինչպէս օրէնքը կը պահանջէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Ռուսական դեսպանը Բ. Դրան հաղորդեր է որ Պուլսարայի էմիրը Ռուս դեսպանատան միջոցաւ 160,000 բուսի, որ ժողովուրդը

իր մէջ հաւաքեր է, զրկեր է Տամակոս-Մէքքէի երկաթուղիի շինութեան համար:

Օտար տէրութեանց Սօֆիաի ընդհանուր հիւպատոսները խրատի ազդարարներ են պուլկարական իշխանապետութեան թէ Պուլկարիոյ մէջ քոմիթէներուն շարունակութիւնը բաղձացուած խաղաղութեան անգործութեան կը վնասէ, թէ իրենց կառավարութիւնները առոր բնաւ չեն հաւնիր, թէ խաղաղութեան ու ապահովութեան պահպանումը առելի կը համապատասխանէ պուլկար իշխանապետութեան էական շահերուն, և թէ խաղաղութեան թշնամի այդ կարգի անձերուն շարամիտ արարքներուն երբէք պէտք չէ թոյլատրել:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկի ուսանողներէն մտ երկու հարիւր հոգի ուզեր են Մայր եկեղեցիին մէջ հոգեհանգիստ կատարել Ալէքսանտր երկրորդի համար ճորտերու ազատման տարեդարձին առթիւ: Ռուսանողները շատ ոգեւորուած ուսականներ են հանգուցեալ ձարին համար: Քաղաքապետը հեծեալ ոստիկաններով յարձակեր է ուսանողներուն վրայ և ամէնքն ալ ձերբակալեր է:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Վիլնէլի մի վէրքը թէեւ ծանր չէ, բայց ստիպուած է անկողնոյ ծառայել: ձերբակալուած գործաւոր Վէլպանդ ոչ մէկ բացառութիւն կուտայ: Միայն յայտարարած է որ ինք մտաւոր հիւանդ է, և իր ըրածը չը գիտեր:

Երեսփոխանական ժողովի մէջ երբ կայսեր վիրաւորուելու լուրը յայտարարուեր է բոլոր երեսփոխանները ոտքի կայներ են, ընկերվարական երեսփոխանները հոն չեն եղեր:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Լօրտ Քիչնէր փետրուար 14ին Միտտէլ Պուրկի մէջ տեսակցութիւն մը ունեցեր է ժէնէրալ Պոթաի և պօէր ուրիշ պետի մը հետ. հոն խօսած են թշնամութիւնները վերջացնելու կարելիութեան մասին:

Լօրէնո Մարքէզէն կը հաղորդեն որ Քիչնէր համաձայնած է եօթը օր զինադադար ընել, մինչեւ որ Պոթա կարենայ միւս պօէր ժէնէրալներու հետ խորհրդակցել:

Իօհանէսպուրկի և Բրէթօրիայի մէջ մեծ ուրախութիւն պատճառած է լօրտ Քիչնէրի և Պոթայի «եսակցութիւնը, Ամէն տեղ շատ լաւատեսութեամբ կը վերաբերին այդ տեսակցութեանը:

Անգլիական երեսփոխանական ժողովին մէջ ազատական երեսփոխան մը հարցապնդեր է թէ կառավարութիւնը կրնայ պատասխան մը տալ Քիչնէրի և Պոթայի տեսակցութեան մասին:

Պ. Պրօտրիկ պատասխանած է որ տեղեկութիւններ կան, բայց կառավարութիւնը առ այժմ չի կրնար յայտարարել:

Չ Ի Ն Ս Ս Ա Ն

Մորնէնք Փոստի Բէքրիէն կը հաղորդեն որ Գերմանական, Յրանսական և Անգլիական զօրավարները հրաման ստացած են շուտափոխ արշաւանքի մը համար պատրաստ ըլլալ, եթէ Ձիւնական արքունիքը կրկին անուշադիր թողու եւրոպացիներու պահանջները:

Բէքրիէն կը հաղորդեն որ ժէնէրալ Ին-Չանկ Վալտերզէի նամակ մը զրկեր է, որով կը խնդրէ նոր արշաւանքներ չսկսի Մարջախտ Վալտերզէ պատասխանած է որ ինք չի կրնար խոստանալ, բայց ամեն բան ընելու է, ինչ որ պարագաները իրեն կը թելագրեն:

Կ Ա Ր Ե Ւ Ո Ր Ա Ջ Ի

Սուրբ Փրկչի Ազգային Հիւանդանոցի Պատուարժան Հոգաբարձութիւնը Պուլկարիոյ մէջ սպանուած համար, ի նպատակ այդ բազմակարգ հաստատութեան հրապարակ հանուած և մասնաւոր խնամքով պատրաստուած առաջին տեսակ սիկարի թրղթէն հոս զրկած ըլլալով, կը խնդրուի յարգոյ հասարակութենէն որ նախապատուութիւն տայ այս թրղթին, թէ անոր ընծայած առաւելութիւններուն համար և թէ նպատած ըլլալու համար հարիւրաւոր խեղճելու հոգատարութեան զօրուարին և բազմապահանջ գործին:

Դիւնի Տիար Պիպէրեանի վաճառատունը, միակ կեդրոնատեղի Պուլկարիոյ համար, Տիպէք-Չէչմէ, 7-10

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ս Ի

Տօֆ. Վ. Տոսովեանցի և Ե. Թոփչեանցի «Die sozial ökonomisch Türcei» Հաւաքական աշխատութիւնը Հայկական հարցի և բնդհանրապէս թուրքիայի մասին: Գիրքը 2 մարկ ճանապարհածախով գրեմել՝ Berlin, Verlagshandlung R. Prager, № 7

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակազուլու, հարսանեկան հրատարակիր, մահազգ: Գիրքերը յոյժ գիւրամատչելի Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ОТГОВОРНИКЪ: Д-ръ М.ХИЖРДИЧЪ ВАРТАНЪ Печ. «Взаимность» — Варна.